ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 45/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ի 17.12.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-45/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, Ծաղկաձորի քաղաքապետարանի 20.12.2014թ. թիվ 360 գրությունն ու կից ներկայացված փաստաթղթերը և ԳԲԽ-45/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 24.12.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

17.12.2014թ. ներկայացրած բողոքով «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ) նշել է, որ Ծաղկաձոր համայնքի կարիքների համար չուգունե սյուներով փողոցային լույսերի ձեռքբերման նպատակով Ծաղկաձորի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԾՔ-ՊԸԱՊՁԲ-14/50» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ն և «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2014թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հայտ ներկայացրած մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան (մասնակիցների հայտերում առկա են եղել հրավերով պահանջված փաստաթղթերը): Նշված արձանագրության 1.3 կետով արձանագրվել է, որ «Ֆառաոն-

գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկում բացակայում է տառերով գրված գնային առաջարկը, ինչի մասին գնահատող հանձնաժողովը գրավոր ծանուցել է մասնակցին և վերջինիս կողմից ներկայացվել է ճշգրտված գնային առաջարկ:

Արձանագրության 2.1 կետի համաձայն՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ն, իսկ 2.2 կետի համաձայն՝ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ն:

Ա/Ձ-ն բողոքում նշել է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածի (գնային առաջարկի) օրինակելի ձևին համապատասխան գնի առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել տառերով և թվերով արտահայտված, մինչդեռ՝ «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում բացակայել է տառերով գրված գինը:

Ա/Ձ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ին հնարավորություն տալով գնի առաջարկում ուղղում կատարել, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից, քանի որ օրենքով նման դրույթ սահմանված չէ: Ա/Ձ-ն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում պետք է մերժեր 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի գնային առաջարկը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ա/Ձ-ն խնդրել է որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել Ծաղկաձորի քաղաքապետարանի և «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ի միջև պայմանագիր կնքելու գործընթացը, իսկ եթե կնքվել է պայմանագիր, ապա նաև պայմանագրով իրականացվող գործողությունները մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելը, ինչպես նաև խնդրել է բավարարել բողոքը և դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2014թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.3 և 2.1 կետերով կայացրած որոշումները:

2. Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Ծաղկաձորի քաղաքապետարանն Ընկերության բողոքի վերաբերյալ 20.12.2014թ. N 360 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասով: Օրենքի 27-րդ հոդվածով սահմանված է մասնակցի կողմից ներկայացվող հայտի մերժման հիմքը, որի համաձայն՝ հայտը մերժվում է գնային առաջարկի ընդհանրապես բացակայության պատճառով: Ընթացակարգի շրջանակներում «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ՝ թվերով արտահայտված, ինչը թերի է և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է նրանով, որ հայտը մերժվում է միայն գնային առաջարկի բացակայության դեպքում:

Պատվիրատուն գնտում է, որ «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ի կողմից Օրենքի 31-րդ հոդվածին կատարած հղումը ամիիմն է, քանի որ «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ն տառերով արտահայտված գնի առաջարկ ընդհանրապես չի ներկայացրել, հետևաբար՝ չէր կարող անհամապատասխանություն լիներ թվերով գրված գնային առաջարկի հետ:

Ըստ Պատվիրատուի՝ գնահատող հանձնաժողովի գործողությունները եղել են իրավաչափ, մասնավորապես «Ֆառառնգրուպ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկի փոփոխություն չի կատարվել, քանի որ մասնակցի կողմից նույն գնային առաջարկը ներկայացվել է նաև տառերով արտահայտված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում կայացնելիս ղեկավարվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե դրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

<u>3. ԳԲԽ-45/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 24.12.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ի 17.12.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-45/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-45/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից Ծաղկաձոր համայնքի կարիքների համար չուգունե սյուներով փողոցային լույսերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԾՔ-ՊԸԱՊՁԲ-14/50» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածի (գնի առաջարկ) 5-րդ՝ «Առաջարկված գինը», սյունյակում սահմանված է, որ առաջարկված գինը պետք է ներկայացնել տառերով և թվերով:

3. «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ն, մասնակցելով «ԾՔ-ՊԸԱՊՁԲ-14/50» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, 2014թ. դեկտեմբերի 11-ին ներկայացրել է գնի առաջարկ, որի 5-րդ՝ «Առաջարկված գինը», սյունյակում գինը նշել է միայն թվերով և այդ սյունյակում բացակայել է տառերով արտահայտված գնի առաջարկը:

4. Ծաղկաձորի քաղաքապետարանը «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Ադլամազյանին ուղղված 2014թ. դեկտեմբերի 12-ի N 353 գրությամբ հայտնել է, որ «ԾՔ-ՊԸԱՊՁԲ-14/50» ծածկագրով պարզեցված ընթացակարգով ընկերության կողմից ներկայացված գնի առաջարկում առաջարկված գինը տառերով չի գրվել, ինչի կապակցությամբ «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ին առաջարկել է Ծաղկաձորի քաղաքապետարան ներկայացնել ճշտված գնի առաջարկ:

5. «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ի կողմից 2014թ. դեկտեմբերի 12-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել է գնի առաջարկ, որի 5-րդ՝ «Առաջարկված գինը», սյունակում առաջարկված գինը նշվել է և թվերով և տառերով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2014թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.3 կետով արձանագրվել է, որ «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկում բացակայում է տառերով գրված գնային առաջարկը, ինչի մասին հանձնաժողովը գրավոր ծանուցել է մասնակցին և վերջինս ներկայացրել է ճշգրտված գնային առաջարկ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2014թ. թիվ 2 արձանագրության 2.1 կետով կայացրած որոշմամբ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է

ճանաչվել «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ն, իսկ 2.2 կետով՝ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 49.1-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ նաև ծավալաթերթ-նախահաշիվների թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում՝ եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվում բառային արտահայտությունը:

Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, որոնք տեղադրված են ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայքի «Օրենսդրություն» բաժնի «Գնումների գործընթացներում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևեր» ենթաբաժնում:

Վերը նշված պաշտոնական կայքի «Օրենսդրություն» բաժնի «գնումների գործընթացներում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևեր» ենթաբաժնում տեղադրված պարզեցված ընթացակարգի հրավերի օրինակելի ձևի «Գնի առաջարկ» հավելվածով սահմանված վավերապայմանների համաձայն՝ մասնակիցը գնի առաջարկը ներկայացնում է տառերով և թվերով:

«ԾՔ-ՊԸԱՊՁԲ-14/50» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածի (գնի առաջարկ) օրինակելի ձևին համապատասխան՝ առաջարկված գինն անհրաժեշտ է ներկայացնել տառերով և թվերով արտահայտված:

Վերոգրյալից հետևում է, որ եթե մասնակիցը գնի առաջարկը ներկայացրել է միայն թվերով և բացակայում է տառերով գրվածը, ապա մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և մերժվում է:

Ինչ վերաբերվում է Ծաղկաձորի քաղաքապետարանի 20.12.2014թ. թիվ 360 գրությամբ վկայակոչած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածին, ապա հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում կայացնելիս չէր կարող ղեկավարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2014թ. թիվ 2 արձանագրության 1.3 և 2.1 կետերով կայացրած որոշումները չեն համապատասխանում Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջին, քանի որ «Ֆառաոնգրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ի 17.12.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել: Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2014թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.3 և 2.1 կետերով կայացված որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Ենոքյան**

Անդամներ՝ **Արայիկ Մնացականյան**

Գոռ Գրիգորյան